ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1955 Общественные науки

ԼՐԱՏՈՒ

ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԿՆԻՔԸ

Վերջին տարիներս մենք աշխատում էինք Հյուսիսային Կովկասում և զեկավարում Զելենչուկի (Կուբանի վերին հոսանքում) տաճարի պեղումները։

Տաճարի ներսում բացվել էր մի դամբարան, որի մեջ կային ոսկե իրեր և այլ առարկաներ։ Կուբանի Ներքին Արխիզ կոչված վայրում (Մեծ Զելենչուկ գետի միջին հոսանքում) պահպանվել են հին քրիստոնեական երեք տաճարներ։ Այդ նույն տարածության վրա երևան են հանված բավականաչափ մեծ մի քաղաքի ավերակները, որտեղ պահպանվել են բարե մեծ շենքերի պատերն ու հիմքերը։ Կասկած չկա, որ այդ քաղաքի տրնտեսական հենակետերից մեկը եղել է տեղական ոսկին և երկաթը։ Քաղաքը գտնվում է Ազովսնծովյան առափնյա տարածությամբ անցնող տրանզիտային ճանապարհի վրա։



Աշոտ Բագրատունու կնիքը (մեծացրած)։

Մեծ Զելենչուկ գետի, ինչպես և Մարուխա և Տերերդա վտակների վերին հոսանքների հետազոտությունը ցույց է տվել, որ Կուբանի ակունքներում զարգացած է եղել երկրագործությունը։ Մեր դիտական արշավախումբը իր պեղումները կատարել է Հյուսիսային Զելենչուկի տաճարի արևմտյան պատի մոտ։

Պեղումների ժամանակ տաճարում գտնվեցին ոսկուց և այլ մետաղներից պատրաստված մատանիներ, օղեր, զարդասեղներ, թանկագին քարեր, եղջերուի և ոչխարի ոսկորներ, հացահատիկ, զոհարերության բար և այլն[1]։

---

[1] Краткие сообщения ИИМК, вып. XII, 1946 г. М.—Л. АН СССР.

Այս բոլոր նյութերը այժմ պահվում են Մոսկվայի պետական պատմական թանգարանում։

Հայտնաբերված նյութերի մեջ հատուկ հետաքրքրություն է ներկայացնում քարե մի կնիք՝ արաբերեն մակագրությամբ։

Կնիքի մակագրությունը թարգմանաբար նշանակում է «Աշոտ, որդին Սմբատի»։ Պրոֆեսոր Վ. Ա. Կրաչկովսկայան կնիքի մակագրության քննությանը նվիրել է հոդված «Աշոտ Բագրատունու կնիքը արաբերեն մակագրությամբ» վերնագրով։ «Մակագրության տեքստը պարունակում է երեք բառ»,—գրում է նա։ Առաջին տողում գտնվում է «Աշոտ» անունը, երկրորդ տողում՝ «Նա», այսինքն՝ «որդին» բառը, որն արաբական տրադիցիայով ցույց է տալիս ազգակցության աստիճանը, այնուհետև հիշատակված անձնավորության հետ, և երկրորդ անունը «Սմբատ»։ Երկու անուններն էլ արաբական չեն, բայց արաբական աղբյուրներում միշտ էլ տրվում են ճիշտ նույն տառադարձությամբ։

Կնիքը պատկանում է հայոց թագավոր Աշոտ առաջին Բագրատունուն, որը կառավարել է Հայաստանը 886—891 թվականներին։ Աբբասյանների Խալիֆ ալ-Մուստամինը նրան նշանակել էր Հայաստանի կառավարիչ «իշխանաց իշխան» տիտղոսով։ 886 թվականին Աշոտ առաջինը Խալիֆ ալ-Մուստամինից ստացել է թագապսակ և «Հայաստանի թագավոր» տիտղոսը։

Հայոց Աշոտ առաջին թագավորի կնիքը, որ գտնվել է Զելենչուկում, վկայում է տընտեսական և կուլտուրական կապի մասին, որ ունեցել է հին Հայաստանը Կուրանի ավազանի ժողովուրդների հետ։

Հայտնաբերված նյութերը միևնույն դարաշրջանին չեն վերաբերում. հացահատիկը վերաբերում է I դարին (մեր դարաշրջանից առաջ), իսկ մակագրությունը՝ մեր դարաշրջանի IX դարին։

Ըստ երևույթին ստորերկրյա դամբարանը քրիստոնեական տաճարից ավելի վաղ է կառուցվել և վերաբերում է հեթանոսության շրջանին։ Այդ են վկայում զոհաբերության քարը, հացահատիկները, ոչխարի և եզջերուի ոսկորները և այլն։ Ավելի ուշ՝ քրիստոնեության դարաշրջանում հեթանոսական այդ սրբավայրերում կառուցվել է քրիստոնեական տաճար։ Գիտնականների մեծ մասն այդ տաճարի կառուցումը վերագրում է IX—X դարերին։

Հ. Օ. ԼԱՅՊԱՆՈՎ

(Ֆրունզե քաղաքի Մանկավարժական ինստիտուտի դասախոս)